Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Իջևանի թիվ 4 հիմնական

Թեմա՝ «Խմբային աշխատանքների արդյունավետությունը մայրենիի դասաժամերին»

Վերապատրաստող, մենթոր՝ Լ. Աղբալյան

Ուսուցիչ՝ Նարինե Սարգսյան

Իջևան 2023

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից կրթական համակարգում դպրոցի մանկավարժական գործընթացը ենթարկվել է փոփոխությունների, որոնք պահանջում են դասավանդման մեթոդների վերանայում, նոր ակտիվ ուսուցման մեթոդների ներմուծում: Ուսուցչի և աշակերտի համագործակցությունը հնարավորություն է ստեղծում դասանյութի նոր դիդակտիկ ուղիներ փնտրելու աշակերտակենտրոն դասի կազմակերպման տեսանկյունից: Սոցիալական հմտությունների զարգացումը կրտսեր դպրոցականների շրջանում, մասնավորապես փոխներգործուն մեթոդների կիրառմամբ համարվում է այսօր կարևորագույն մանկավարժական խնդիրներից տարրական դպրոցում, ինչը նպաստավոր պայման է հանդիսանում կրտսեր դպրոցականների արդյունավետ սոցիալականացման համար:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում կնպաստի դպրոցականների <<Նուրբ հմտությունների>> ձևավորմանը՝ հույզերի, թիմում աշխատելու և հաղորդակցական կարողությունների, հասակակիցների հետ միջանձնային առողջ փոխհարաբերությունների կառուցմանը, ինքնավստահության, կոնֆլիկտների հաղթահարման, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման, փոխօգնությանը: Այսօր մանկավարժության գերխնդիրն է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման ձևերի ու միջոցների որոնումն ու մշակումը:

Մանկավարժության մեջ արդեն իսկ ձևավորվել են ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստող մի շարք մոտեցումներ, որոնք խթանում են երեխայի ակտիվությունը ուսուցման գործընթացում, զարգացնում են նրա ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, նպաստում են նրա ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Փոխներգործուն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի մանկավարժական գործընթացում՝ ժամանակակից մանկավարժական մոտեցումներից մեկն է, որը նպաստում է ինչպես երեխայի որպես սուբյեկտ հանդես գալուն, այնպես էլ նրա ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: Դպրոցում այսօր կիրառվում են մի շարք մանկավարժական տեխնոլոգիաներ՝

խաղային, պրոբլեմային, նախագծային և այլն: Այս տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն է գրավում համագործակցային ուսուցման տեխնոլոգիան:

Այսպիսով յուրաքանչյուր աշակերտ ընկալվում է որպես եզակի անհատականություն, ով պետք է զարգանա իր անհատական ընդունակություններին համապատասխան: Ուսուցիչը դասի ընթացքում պետք է կարողանա ստեղծել այն մանկավարժական պայմանները, կիրառել տարբեր մանկավարժական տեխնոլոգիաներ ուսուցման գործընթացում, որոնք հնարավորություն կտան աշակերտներին ինչպես դրսևորվելու և առանձին անհատ և համագործակցելու հասակակիցների հետ՝ զարգացնելով մի շարք հաղորդակցական ընդունակություններ՝ հիմնվելով փոխադարձ երաանքի և դրական կողմերի վրա: Համագործակցային ուսուցումը ուսումնառության գործընթացքը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքիր՝ նպաստելով կրտսեր դպրոցականների համար հավասար մասնակցության ապահովման հարցը: Դասարանը այս պարագայում դառնում է ընդհանուր նպատակ ունեցող անհատների փոքր խմբերի մի թիմ, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից:

Մեր հետազոտության շրջանակներում մենք դիտարկելու ենք համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների դերը խմբային աշխատանքը դպրոցականի ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում:

Հետազոտական հարցը

Ի՞նչ մեթոդներ և հնարներ կիրառել խբային աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար մայրենիի դասաժամերին:

Հետազոտության նպատակը՝ մայրենիի դասը խմբային աշխատանքի միջոցով դարձնել արդյունավետ:

Հետազոտության խդիրներն են.

1. Ուսումնասիրել գրականության կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաների էությունը:

2. Բացահայտել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կարևորությունը և անհրաժեշտությունը դպրոցի մանկավարժական գործընթացում:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում՝ ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ:

Կրթության կազմակերպման խդիրներից են կրթական համայնքի ստեղծումը, սոցիալապես ակտիվ, ինքնակազմակերպվող խմբի համակեցությունը: Այս խնդիրների լուծման լավագույն ճանապարհը խմբային աշխատանքն է, որտեղ դրսևորվում են խմբի անդմաների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ապրումակցելլու: Դասավանդողը ինքը պիտի տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին ու խթան նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը: Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցան գործընթացը: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա:

Խմբային աշխատանքը խթանում է սովորողների՝

- համատեղ մտավոր աշխատանքը, որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց,
- կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու բնակությունը
- այլոց նկատմամբ հարգանքը,
- խմբի մաս լինելու գիտակցումը և խմբի համար պատասխանատվությունը:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցության. Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

1. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար , խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդունքը:

2. Սոցիալական հմտություններ: Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

3. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Ուսուցումը բարդ ու շղթայական գործընթաց է, որի մեջ որքան կարևոր ու ամեն նոր տրված նյութ ու կուտակած գիտելիք, այնքան էլ իմացածը կիրառելու, միմյանց լսելու, կարծիքներ արտահայտելու կարողությունը: Մարդու զարգացման հիմքը դրվում է լսելու, վերլուծելու, արտահայտելու ունակությամբ:

Կարող ենք ասել, որ դասընթացում այս ամենն ամբողջացնում են խմբային աշխատանքները: Խմբային աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար նախ անհրաժեշտ է կատարել խմբերի ճիշտ բաժանում: Նպատակահարմար է խումբն այնպես ձևավորել որ յուրաքանչյուր խմբում ներառվեն տարբեր կարողությունների ու առաջադիմության սովորողներ: Այնուհետև անհրաժեշտ է, որ ուսուցիչն ինքը դառնա խմբի անդամ, վարպետորեն կատարի եմայի բաժանում՝ հենվելով սովորողի ընդունակությունների ու նախասիրությունների վրա:

Խմբի ոչ մի անդամ չունի նույն գիտելիքն ու փորձը, ինչպես ամբողջ խումբը: Ուստի կարևոր է, որ խմբի անդամները լսեն մյուսների կարծիքները, դասեր քաղեն իրենց հասակակիցներից, ունենան լսելու ու միմյանց լրացնելու կարողություն:

Խումբ ձևավորելու եղանակները

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերների ցանկությամբ կամ ուսուցճի կողմից՝ միտումնավոր կերպով: Ակնհայտ է, որ վերջին տարբերակն ուսուցչին հնարավորություն կտա հասնելու իր դիդակտիկ պատակներին, քանի որ այս դեպքում խմբում հնարավոր է ապահովելու արդյունավետ համագործակցության բոլոր պայմանները՝

- ընդունակությունը և գիտելիքը,
- անձնական համակրանքը,
- գենդերային հավասարակշռությունը,
- էթնիկ խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը:

Խմբային աշխատանքի առավելությունները

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականույան և արժեքային համակարգի ձևավորման վրա՝

- միասին մտածելը,
- հարմարվելու ունակությունը,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու, համոզելու ունակությունը,
- այլոց նկատմամբ հարգանքը, տարակարծության նկատմամբ հանդուրժողականությունը,
- խմբի մաս լինելու փորձը:

Խմբերի ձևավորում ըստ աշակերտների հետաքրքրությունների

Խմբերը պետք է ունենան միատար կառուցվածք, միևնույն խմբի մեջ ներառված աշակերտներին պետք է տրվի նույն առաջադրանքը: Պարտադիր չէ, որ խմբի անդամները համագործակցեն միմյանց հետ, տրված առաջադրանքները նրանք կարող են կատարել ինքնուրույն, իրարից անկախ նման դեպքորում հնարավոր է ստեղծել ավելի մեծ խմբեր:

Այնուհանդերձ, եթե առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է, որ խմբի անդամները լինեն 3-5 աշակերտ, խմբի ձևավորման այս եղանակը հատկապես հարմար է շնորհալի երեխաների հետ աշխատանքի համար կամ այնպիսի իրավիճակներում, երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

«Մեր հայրենիքը Հայաստանն է» թեմայի ամփոփումն անցկացվեց խմբային աշխատանքի միջոցով:

Վիճակահանության սկզբունքով արկղից աշակերտները հանում են փոքրիկ թերթիկներից, որոնց վրա գրված էին մեկից մինչև 5 թվերը: Թերթիկները քաշելուց հետո համապատասխանաբար զբաղեցնում են իրենց տեղերը: Յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խմբի ավագին և ներկայացում է անդամներին: Որից հետո պատրաստի վրա գրում են իրենց կողմից պահպանվող հետևյալ կանոնները:

- Ես պետք է այնպես անեմ, որ իմ թիմակիցները յուրացնեն նյութը:
- Սովորելը չեմ ավարտի, քանի դեռ բոլորը չեն յորացրել:

- Նախքան ուսուցչից օգնություն խնդրելը՝ կդիմեմ ընկերներիս:
- Ես քննադատում եմ գաղափարները, ոչ թե մարդկանց:
- Քաջալերում եմ յուրաքանչյուրի մասնակցությունը:
- Լսում եմ բոլորի մտքերը, նույնիսկ եթե համաձայն չեմ դրանց հետ:
- Կարող եմ ցածրաձայն խոսել թիի անդամների հոտ:

1. խումբ- Պաստառի վրա հանձնարարված է 8 կետով հարց – առաջադրանքներ:

- Շարունակել «Սասունցի Դավթի կռիվը Մելիքի դեմ» դասը:
- Կազմել նոր բառեր:
- Առանձնացնել գոյական, ածական, բայ:
- Գրել բառերի հոմանիշները, հականիշը
- Բառերը բաժանել բաղադրիչների և ընդգծել արմատները:
- Գրել բառերի հոգնակին:
- Տողադարձել բառերը:
- Գրել բառի ուղիղ ձևը:

2 խումբ – աշակերտներն արտահայտիչ արտասանում են «Հայոց լեզու» բանաստեղծությունը, գրառումներ կատարում բանաստեղծության ավարտի վերաբերյալ, համառոտ վերապատմում:

- Կազմում «Վեննի դիագրամ»
- Բացատրում տվյալ բառերի նշանակությունը
- Գրել հայոց լեզվի մասին բառակապակցություն
- Տեղեկություններ հայց լեզվի, տառերի, Մեսրոպ Մաշտոցի մասին:
- Վանկատել բառերը:
- Հաշվել բառերի հնչյունների ու տառերի քանակը:
- Շարունակել բանաստեղծության միջոցը:

3 խումբ – Աշակերտներն արտահայտիչ կարդում են «Ծիծեռնակաբերդ» դասը և արտասանում են «Զինվորիկի երգը» բանաստեղծությունը:

- Բնութագրել զինվորիկին:
- Լրացնել բաց թողնված տառերը:

- Կազմել բառակապակցություններ:
- Գրել անձ և իր ցույց տվող բառեր
- Կազմել նախադասություններ և ընդգծել գլխավոր անդամները:
- Կազմել ածանցավոր բառեր:

4 խումբ – «Հայաստանի քարերը» դասը կարդալ, պատմել, պատասխանել հարցերին:

- Կազմել գործողություն ցույց տվող բառեր
- Ընդգծել երկինչյունները:
- Կազմել բարդ բառեր:
- Կազմել ածականներ:
- Գրել Հայաստանի քարերի անուններն ու գույները:

5 խումբ – Աշակերտները շարունակելով արտասանում են «Հայը» բանաստեղծությունը

- Պատմում են Հայաստանի մասին
- Պատմում են դրոշի, զինանշանի մասին, երգում օրհներգը:
- Բառակապակցությունների իմաստն արտահայտել ածականներով:
- Կազմել ածանավոր բառեր:
- Բայերից ստանալ գոյականներ:
- Բնութագրել «Հայաստան» բառը:
- Հաղթել բառը խոնարգել ապառնի ժամանակով:
- Գրել տրված բառերի հոմանիշները և հականիշները:

Պատասխանները բաժանելուց հետո, յուրաքանչյուր խումբ ընտրում է իր ավագը: Ավագը ներկայանում է հետո ներկայացնում իր խմբի 4 անդամներին: Այսինքն կազմվեց 5 խումբ, յուրաքանչյուրում՝ 5 աշակերտ: Բացակա չկար:

Աշակերտներին առաջարկու եմ աշխատել թիմերով: Շրջում եմ դասարանում, խրախուսում լավ աշխատող թիմերին, կարճ ժամանակով նստում յուրաքանչյուր թիմի հետ լսելու, թե ինչպես են աշխատում խմբի անդամները և հիշեցնելու խմբային աշխատանքի կանոնների պահպանման անհրաժեշտությունը: Սահմանվում է

ժամանակ, որի ընթացքում աշակերտները պետք է հասցնե կատարել հանձնարարված աշխատանքը:

Աշխատում են բոլորը՝ համագործակցելով միմյանց հետ:

Վերջացնելուց հետո նորից ստուգում են իրենց աշխատանքը և պատրաստվում ներկայացնելու:

Աշխատելու ընթացքում ձեռք կբերեն հետևյալ հմտությունները՝ ավելի բարյացակամ և դրական վերաբերմունք՝ ընկերների, ուսուցչի, դպրոցի նկատմամբ, հաջողության հասնելու շահագրգռվածություն, վարքագծի բարձր մակարդակի դրսևորում, ստեղծագործական մտքի զարգացում, հարմարվելու կարողություն, դասընկերների հետ հանդուրժող և աջակցային հարաբերության հաստատում:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը, տրվում են լրացուցիչ հարցեր:

Օգտագործված մեթոդներ	Հարցում, դիտում, քննարկում
Իրականացման ժամանակահատվածը	2 շաբաթ
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային, բաշխում/	III դասարան 25 աշակերտ 12 տղա 13 աղջիկ

Եզրակացություններ, առաջարկություններ:

Խմբային աշխատանքը նպաստում է ստեղծագործական իրադրության ապահովմանը, մտավոր նախավարժանքի, մտածելու և մտքերի ազատ փոխանակման մթնոլորտի ստեղծմանը, բացատրական ընթերցանության ճիշտ օգտագործմանը, հետազոտական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը և, ի վերջո, սեփական հնարավորությունների ճանաչմանը:

Աշակերտների մեջ ձևավորվելու են տեսակներն ու մտքերը հստակ արտահայտելու, իրավիճակը վերլուծելու կարողություններ, ճիշտ համագործակցելու, սովորելու, սովորեցնելու, հանդուրժելու, սլելուև այլ անձնային հատկանիշներ:

Աշակերտները փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, թեմա հետազոտելու կամ նոր մտահղացում իրականացնելու ուղղությամբ: Այս մեթոդը նպաստում է, որ երեխաները սովորեն իրարից, սովորեցնենմիմյանց, արդյունավետորեն համագործակցեն և դրսևորեն ստեղծագործական մոտեցումներ:

Այս կերպ նրանք ձեռք են բերում ամբողջ շրջապատն ընկալելու ունակություն, ստեղծագործական գործընթացի մեջ ունենում են անհատական ներդրուներ: Այսպես բարձրանում է ուսուցման արդյունավետությունը:

Խմբային աշխատանքի ժամանակ փոխներգործուն մեթոդները խարսխվում են ուսուցման և դաստիարակության մեթոներին: Դրանք դառնում են ավելի ճկուն, ապահովում ուսուցումը համագործակցության սկզբունքի կիրառման արդյունավետությունը:

Այս մեթոդով աշխատող աշակերտներն զգում են, որ ընդհանուր առաջադրանքը կատարելու հաար իրենք միմյանց կարիքն ունեն: Նրանք խթանում են միմյանց ուսումնառությունը՝ իրար օգնելով, մտքեր փոխանակելով և սովորելու քաջալերելով:

Խմբերը չեն կարող արդյունավետ կերպով գործել, եթե աշակերտները չկիրառեն համատեղ համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ աշխատանքի համար անհրաժեշտ հասրակական – հաղորդակցական հմտություններ՝ որոշման կայացումը, ղեկավարումը, վստահության ձևավորումը, կոնֆլիկտի կառավարումը, արդյունավետ աշխատանքային հաստատությունների պահպանումը:

Ձեռք բերեն անձնային հմտություններ և որակներ, հարցեր ալ, պատմել ու լսել դիացինին, բանավեճ կազմակերպել, դրսևորել ստեղծագործական տքի արտահայտում, կարգապահության ապահովում, ակտիվության ցուցաբերում:

Խմբային աշխատանքները նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր ու աշխույժ դարձնելու պայմանների

ստեղծմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքիր քննարկումների ծավալմանը, տարբեր կարծիքների հետ ծանոթացմանը:

Նրանք ձեռք կբերեն հետևյալ հմտությունները՝ ավելի բարյացակամ և դրական վերաբերմունք ընկերների, ուսուցիչների, դասաանդվող առարկաների, դպրոցի նկատմամբ, հաջողության հասնելու շահագրգռվածություն, վարքագծի բարձր մակարդակի դրսևորում, ստեղծագործական մտքի զարգացում, հարմարվելու կարողություն, դասընկերների հետ հանդուրժող և աջակցայինհարաբերության հաստատում:

Ուսուցիչը պետք է պահանջկոտ և հետևողական լինի բոլոր աշակերտների նկատմամբ, պահանջկոտությունն էլ պետք է հիմնավորված լինի և ունենա դրական ուղղվածություն: Ուսուցիչը պետք է նպաստի սովորողների մեջ դրական անձնային որակների զարգացմանը, այդ թվում՝ ինքնուրույնության, ինքնակրթության, ինքնավերահսկման, համագործակցելու և ուրիշներին օգնելու պատրաստակամությունը և այլն:

Վերհանված ադյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցերին:

Կատարել եմ ձեռք բերած արդյունքների վերլուծություն և ընդհանրացում: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ եկել եմ այն եզրակացության, որ մարու զարգացման հիմքը դրվում է լսելու, վերլուծելու, արտահայտելու ունակությամբ:

Կարող եմ ասել, որ դասընթացում այդ ամենը ամբողջացնում են խմբային աշխատանքները; Խմբի ոչ մի անդամ չունի նույն գիտելիքն ու փորձը, ինչպես ամբողջ խումբը: Ուստի կարևոր է, որ խմբի անդամները լսեն մյուսների կարծիքները, ասեր քաղեն իրենց հասակակիցներից, ունենան լսելու և միմյանց լրացնելու կարողություն:

Օգտագործված գրականության ցանկ

Օրինակ՝

1. Ջ. Գյուլամիրյան, Կ. Թորոյան Մայրենի 2, Երևան, «Լույս» 2002:

2. Քննադատական մտածողության զարգացումը կրտսեր դպրոցում:

Ծրագրեր և նյութեր, Երևան 2002:

3. Ջինի Լ. Աթիլ, Քուրթիս Ա. Մերեսիթ և Չարլզ Թեմփլ, Ուղեցույց 1-7:

Պատրաստվել է ՔՄՀԿԳՄ ծրագրի համար, 1988:

4. Ջ. Գյուլամիրյան, փոքրածավալ խոսք կառուցելու կարողության ձևավորման մեթոդիկան տարրական դասարաններում, «Նախաշավիղ» 2-6, 2001:

5. Ա. Տեր- Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան 1974: